Նմուշ ստուգման ձեռնարկից

Կարճ և ընդարձակ պատասխաններով առաջադրանքների համար կազմվում է ստուգման ձեռնարկ՝ տարբեր ստուգողների կողմից գնահատումը հնարավորինս նույնականացնելու նպատակով: Առաջադրանքին տրվող պատասխանները կարող են լինել հետևյալ կարգերի՝ լիարժեք ճիշտ (ընդ որում լիարժեք ճիշտը կարող է ունենալ տարբերակներ), մասնակի ճիշտ և սխալ՝ տարատեսակներով (ենթադրելի սխալ պատասխան և անսպասելի սխալ պատասխան): Յուրաքանչյուր դեպքի համար տրվում է համապատասխան կոդ՝ վերլուծությունը ըստ դրանց կատարելու համար: Առանձին կոդեր են նախատեսված նաև անհամապատասխան սխալ պատասխանի (ներառյալ՝ խզբզոց) և պատասխանի բացակայության դեպքերի համար:

Ընդարձակ պատասխան պահանջող **Նմուշ 8-ի** ստուգման ուղեցույց.

Կոդը	**Պատասխանը**
	Լիարժեք ճիշտ պատասխան
20	Արսենի ուղղումը՝ ***Առաքումն՝ անվճար***, Վարդուհու ուղղումը՝ ***Առաքումն անվճար է***, կամ այլ ճիշտ ավելացրած բառ: Ընդունելի է նաև սխալների ճիշտ նկարագիրը:
	Մասնակի ճիշտ պատասխան
10	Արսենի ուղղումը ճիշտ է, իսկ Վարդուհունը՝ սխալ կամ չկա:
11	Վարդուհու ուղղումը ճիշտ է, իսկ Արսենինը ՝ սխալ կամ չկա:
	Սխալ պատասխան
70	Կատարվել է որևէ մեկը ուղղելու սխալ փորձ:
79	Այլ սխալ (ներառյալ՝ խզբզոց)
	Պատասխան չկա
99	Դատարկ